Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում

Կատարող՝ Սուսաննա Հովսեփյան

Դպրոց՝ Հովհ. Շիրազի անվան հ. 169 հիմնական դպրոց

Առարկա՝ հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 2

Արժեքային համակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ----------4

Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները----------5

Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում------- 6

Եզրակացություն----------14

Օգտագործված գրականություն----------16

Ներածություն

Արդի մակավարժության կարևոր պահանջներից է սովորողների արժեքային համակարգի ձևավորումը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում[1]:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործող անհատականություն:

1.Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

Հայաստանում արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ (գիտելիք, հմտություններ, արժեքային համակարգ, դիրքորոշում)։

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման , կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ։Այս գործում ուսումնական բոլոր առարկաներն էլ կարևոր են, սակայն անփոխարինելի է «Մայրենի»,«Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դերը։

Աշխատանքի նպատակն է բացահայտել աշակերտների արժեքային համակարգի ձևավորման հիմնական առանձնահատկությունները մայրենիի և գրականության դասերին, ցույց տալ օրինակներով , անդրադառնալ արժեհամակարգի վրա ազդող գործոններին։ Ուսուցանվող թեմաների միջոցով ձևավորել ճիշտ արժեքային համակարգ ։

Արժեհամակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ

Որքան ավելի շատ սեր, իմաստություն, գեղեցկություն, բարություն թաքցնեք ձեր մեջ , այնքան ավելի շատ կնկատեք դրանք շրջապատող աշխարհում:

Մայր Թերեզա

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ:

Երեխաների արժեքային համակարգի ձևավորումը արդի մանկավարժության կարևոր պահանջներից է: Ինչպես արդեն նշեցինք, Հայաստանում արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

Ազգի հիմքը կրթությունն է, և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին:

Կրթության նպատակը ոչ միայն անհատին գիտելիքներով զինելն է, այլ նրա մեջ որոշակի բարոյական հատկանիշներ ձևավորելը: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի առաքելություն, այն է՝ կրթել և դաստիարակել հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ:

Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական, ազգային-հասարակական նորմերի ճիշտ արժևորումը, ազգային դիմագծի պահպանումը, նոր սերունդների մեջ այդ նորմերի ամրակայումը և դաստիարակության գործում դրանց կիրառումը:

Գաղտնիք չէ, որ այսօր սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ուղղակիորեն կապված է հասարակության մեջ տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններով: 21-րդ դարում նոր տեխնոլոգիաները, ծրագրերը, կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները թելադրում են նորովի մոտեցում յուրաքանչյուր աշակերտի:Մերօրյա իրականությունը թելադրում է հայ սերնդին առավել քան երբեք զինել գիտելիքով և հայրենասիրությամբ մեր թուլացած պետականության հիմքերը ամրապնդելու համար:

Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները

Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, ոճը և այլն:

Աշակերտների արժեհամակարգի վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, սակայն այդ միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»[2:]

Աշակերտների արժեհամակարգի ձևավորման մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումը, արժեքային նախապատվությունը, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային

2.Մ. Մոնտեն,Փորձեր,2016,էջ 26

առանձնահատկությունների: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը:

Մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները:Աշակերտները նրանցից կարող են ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական մոդելներ:Ի դեպ, բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և բացասական ազդեցություն ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Ուստի պահանջվում է մանկավարժական խստագույն վերահսկողություն:

Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

> Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչման հետ:
>
> Հովհ. Թումանյան

Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում կարևոր դեր և նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, սակայն չափազանց մեծ է հատկապես հումանիտար առարկաների, մասնավորապես լեզվի և գրականության դերը:

Գրականության ուսումնասիրությունը սովորողի բառապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության, երևակայության ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրական ճաշակի ձևավորմանը զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման արդյունավետ

միջոց է և մեծապես նպաստում է բարձր բարոյական գծերի՝ հայրենասիրության, քաղաքացիական պատասխանատվության, մարդասիրության, կարեկցանքի ու հանդուրժողականության, ընկերասիրության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը:

Հայ գրականությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:
Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով /անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ/ առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել միմյանց, նաև ընդօրինակել:Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Դպրոցում աշակերտները գրականության ծրագրի շրջանակներում առնչվում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի կրած դժվարություններին ու կորուստներին:Գրականության շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, հայրենասեր ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց

ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի։

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից է աշակերտի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումը: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք մեզ է հասել մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի համար անհրաժեշտ են և կարևոր բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումը և ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, աշխարհըմբռնումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի սպասելիքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական ուժը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից սերնդին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների համապատասխան կիրառման մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, ձեռքբերումները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու արժեքները:

Հայ գրականության իմացությունն առավելագույնս նպաստում է ազգային արժեքային համակարգի ձևավորմանը, հնարավորություն տալիս իրականացնելու մեր ցանկությունները, երազանքները, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

Հայ գրականության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, ազգային-պետական մտածողությունը,հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հայրենիքին,պատկերացում կազմել

համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Մայրենիի և գրականության դասավանդման ժամանակ աշակերտները ծանոթանում են նշանավոր գրողների գործերին:Նրանց մոտ ձևավորվում է հատուկ վերաբերմունք դեպի համամարդկային արժեքները՝ սեր, բարություն, ռազմահայրենասիրություն, մշակութային արժեքներ, գեղագիտական արժեքներ, ազնվություն, ճշմարտախոսություն, կամք, քաջություն, ազատություն և այլ արժեքներ: Դիտարկենք մի քանիսը:

Հեքիաթներ, 5-րդ դաս. Առակներ	Հայրենասիրություն,բարություն, աշխատասիրություն, ծնողասիրություն,անշահախնդրություն, ընկերասիրություն,ազնվություն, համեստություն,քաղաքավարություն, առատաձեռնություն,երախտագիտության զգացում, հավատարմություն
«Իմ տատը» /հատված Գ. Մահարու «Մանկություն» վեպից/, 6-րդ դաս.	Սեր և հոգատարություն, անձնվիրություն, հարգանք մեծերի նկատմամբ
Ստ. Զորյան «Պապն ու թոռը», 6-րդ դաս.	Սեր, հոգատարություն, մարդկային ջերմ հարաբերություններ,սեր բնության նկատմամբ, գեղեցիկը տեսնելու և զգալու զգացողություն

Լեոնարդո դա Վինչի «Որդիական երախտագիտություն», 6-դաս.	Սեր, ուշադրություն, երախտագիտության զգացում,հոգատարություն, աշխատասիրություն, աշխատանքը բաժանելու և միասին կատարելու կարողություն
Հայկ և Բել /ըստ Մովսես Խորենացու/, 6-րդ դաս	Հայրենասիրություն,նախնիների ճանաչում,քաջություն,ուշիմություն ազատասիրություն,
Մուշեղ Գալշոյան «Կռունկ», 6-րդ դաս.	Հայրենասիրություն, կարոտ հայրենի երկրի, տան նկատմամբ, սեր հայրենի երգերի նկատմամբ, աշխատասիրություն, հոգատարություն, բնության և մարդու կապ
Եղ. Չարենց «Ես իմ անուշ Հայաստանի», 7-րդ դաս.	Սեր առ հայրենիք, սեր առ ազգային մշակույթ և լեզու
Դերենիկ Դեմիրճյան «Ավելորդը», 7-րդ դաս.	Գթասրտություն, մարդկային կյանքի արժևորում, սեր և հոգատարություն հարազատի նկատմամբ, խղճի զգացում, սխալը հասկանալու գիտակցում
Հրանտ Մաթևոսյան «Կանաչ դաշտը», 7-րդ դաս.	Բնության գեղեցկության զգացում, մայրական սեր, անձնազոհություն, պայքարի գիտակցում,սեր կենդանիների նկատմամբ, բնության պահպանություն
«Սասունցի Դավիթ» էպոսը, 9-րդ դաս.	Հայրենասիրություն,մարդասիրություն, ազատասիրություն, արդարամտություն,քաջություն,

	պատվասիրություն,խաղաղասիրություն, մեծահոգություն,լավատեսություն, նվիրվածություն, սեր հայրենիքի, հայրենի բնաշխարհի և ընտանիքի նկատմամբ

Ուսուցիչը դպրոցականի հոգևոր աշխարհը կերտողն է, գեղեցիկի զգացողության մշակողն ու ներարկողը:Նա է զարգացնում գեղեցիկի զգացումը, ձևավորում առողջ գեղագիտական ճաշակ, արվեստի ստեղծագործությունները, հայրենի բնության գեղեցկությունն ու հարստությունը ճիշտ ըմբռնելու և գնահատելու հմտություն:

Դասի պլան-1

Առարկան՝ մայրենի

Դասարանը՝ 6-րդ

Թեման՝ Ավ.Իսահակյանի «Արագածին» բանաստեղծությունը

Դասի տիպը՝ գիտելիքների ամրապնդման և ամփոփման դաս

Դասի նպատակը՝

- վեր հանել բանաստեղծության գաղափարը
- ձևավորել ճանաչողական կարողություններ
- հարստացնել բառապաշարը
- ձևավորել վերաբերմունք հայրենի եզերքի նկատմամբ
- սերմանել հայրենասիրություն և համերաշխություն

Վերջնարդյունքներ՝

Աշակերտը կկարողանա՝

- արտահայտիչ արտասանել բանաստեղծությունը
- վերլուծել բանաստեղծությունը՝ վեր հանելով հիմնական գաղափարը
- ճանաչել և գնահատել հայրենի բնաշխարհը, ներկայացնել տեղեկություններ Արագածի մասին
- կատարել բառային և տեքստային աշխատանք

Դիդակտիկ նյութեր՝ Ավ.Իսահակյանի դիմանկարը,Արագած լեռան նկարներ, քարտեզ, գրքեր

Դասի ընթացքը՝

ա/ Կազմակերպչական մաս

բ/ Խթանման փուլ

Տեղեկություններ, ասույթներ Ավ. Իսահակյանի մասին։

Տեղեկություններ Արագած լեռան մասին։

գ/Իմաստի ընկալման փուլ

Կարդալ «Արագածին» բանաստեղծությունը, տուն առ տուն վերլուծել, բացատրել կարմիր գրված բառերի իմաստը,առանձնացնել փոխաբերական իմաստով գործածված բառերն ու բառակապակցությունները։

Արտահայտիչ արտասանել անգիր։

Արտասանել այլ բանաստեղծություններ, պատմել ավանդություններ հայոց լեռների մասին։

Խոսել 2005 թվականին կազմակերպված միասնության շուրջպարի մասին։

Երգ՝«Միասնության շուրջպար»

դ/Կշռադատման փուլ

Ամփոփում/ քառաբաժան/

ե/Տնային հանձնարարություն՝ գրել շարադրություն՝ «Իմ Արագած» վերնագրով։

զ/Անդրադարձ

Միջառարկայական կապեր՝

աշխարհագրություն, նկարչություն, երաժշտություն

Խաչվող հասկացություններ՝

1. օրինաչափություն

2. կառուցվածք և գործառույթ

3. անհատական և մշակութային արժեհամակարգ

Կապը ՀՊՉ-ի հետ՝

Հ10-1,10-2, 10-8, 10-25, 10-31

Դասի պլան-2

Առարկան՝ գրականություն

Դասարանը՝ 7-րդ

Թեման՝ Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքը

Դասի տիպը՝ նոր նյութի հաղորդման

Դասի նպատակը՝

- ծանոթացնել պատմածքին
- հարստացնել բառապաշարը
- ձևավորել վերաբերմունք հայրենի բնության, կենդանիների նկատմամբ
- զարգացնել բնության գեղեցկությունները տեսնելու, պահպանելու կարողություններ
- արթնացնել սեր կենդանիների նկատմամբ
- ցույց տալ մայրական սիրո արտահայտությունը կենդանիների մոտ

Վերջնարդյունքներ՝

Աշակերտը կկարողանա՝

- ուսումնասիրել և մեկնաբանել պատմվածքի հատվածները՝ ուշադրություն դարձնելով գործողությունների զարգացմանը
- վեր հանել հիմնական գաղափարը
- դիտարկել պատմվածքն իբրև ժանր
- կատարել բառային և տեքստային աշխատանք

Դիդակտիկ նյութեր՝ Հրանտ Մաթևոսյանի դիմանկարը,կենդանիների նկարներ,ասույթներ՝ մայրական սիրո և անձնազոհության մասին

Դասի ընթացքը՝

ա/ Կազմակերպչական մաս

բ/Խթանման փուլ

Աշակերտները, նայելով դասագրքի նկարին, կասեն՝ եթե հայտնվեին այդպիսի

դաշտում, ինչ կնկատեին առաջինը և ինչ զգացողություններ կունենային։

Կթվարկեն կենդանիների անուններ, Վենի դիագրամով կհամեմատեն գայլին և ձիուն։

գ/Իմաստի ընկալման փուլ

Ուղղորդված ընթերցանությամբ կծանոթանան պատմվածքին /Ի՞նչ եղավ հետո։ Ինչո՞ւ եմ այդպես կարծում/։

Ընթացքում կբացատրվեն անծանոթ բառերը, կառանձնացվեն տողեր։

դ/Կշռադատման փուլ

Վեր հանել հիմնական գաղափարը։

ե/Տնային հանձնարարություն՝ կարդալ պատմվածքը, առանձնացնել պատկերավորման միջոցները։

զ/Անդրադարձ

Միջառարկայական կապեր՝ հայոց լեզու, կենսաբանություն, արվեստ

Խաչվող հասկացություններ՝

1.պատճառ և հետևանք

2.կառուցվածք և գործառույթ

3.ժամանակ և տարածություն

4.անհատական և մշակութային արժեհամակարգ

Կապը ՀՊՉ-ի հետ՝

Հ10-1,10-2, 10-8, 10-31, 10-34

Եզրակացություն

Տու՛ր այսօրվա երիտասարդությանը գեղեցիկի, լուսավորի ու վսեմի օրինակներ, վաղը նրա շնորհիվ մենք կունենանք մեր երազած հայրենիքը։

Գարեգին Նժդեհ

Մարդու աշխարհն արժեքների համակարգ է՝ կազմված բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի, գեղեցիկի և տգեղի, վեհի և ստորի, ուժեղի և թույլի ու բազմաթիվ այլ երևույթների վերաբերյալ նրա պատկերացումներից։ Իր ողջ կյանքի

ընթացքում մարդն առանձնացնում է առաջնայինը և երկրորդականը, կարևորը և ոչ կարևորը։Այդպես նա գնահատում է աշխարհում գոյություն ունեցող դեպքերը՝ դրանով իսկ ձևավորելով իր արժեքային համակարգը, որը ոչ միայն իմաստ և նշանակություն է տալիս,այլ որոշում է նրա գործողություններն ու վարքը։Ահա թե ինչու է կարևոր արժեհամակարգի ձևավորումը։

Գրականության դասավանդման նպատակը, բացի սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելուց, անհատին հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, ընկերասիրություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և այլ հատկանիշներ։

Ազգային արժեքներն ու մշակույթը պիտի պահպանվեն, գնահատվեն, փոխանցվեն սերնդեսերունդ, որպեսզի ապրի հայը, սիրի իր երկիրը և պայքարի հայրենիքի համար։ Ազգային արժեհամակարգով ձևավորված սերունդը կունենա արժանապատիվ ապագա։

Օգտագործված գրականություն

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիրակության գործընթացում,Երևան 2002թ.

2.Ա. Սարգսյան, Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, ԵՊՀ,2019

3. Մայրենի 5-6 /մեթոդական ձեռնարկ/ Գ. Մկրտչյան, Ն. Տողանյան,Երևան 2009

4. Մայրենի 6 /դասագիրք/, Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա.Գալստյան, Երևան 2020

5. Գրականություն 7 /դասագիրք/, Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան, Երևան 2023

6. Գրականություն 7 /մեթոդական ուղեցույց/, Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան, Երևան 2023